**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**
**«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդվածը 1.** Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՕ-233-Ն օրենքի(այսուհետ՝օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասում «եւ ավտոբուսները» բառերը փոխարինել «ինչպես նաեւ միջպետական ուղեւորափոխադրումներ իրականացնող 6-ից ավելի նստատեղ ունեցող ավտոտրանսպորտային միջոցները» բառերով, իսկ «տախոգրաֆով» բառից առաջ լրացնել «թվային» բառը»:

**Հոդված 2**. Օրենքի 8-րդ հոդվածում լրացնել նոր՝3-րդ մաս.

«3. 6-ից ավելի նստատեղ ունեցող ավտոտրանսպորտային միջոցներով միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնելիս փոխադրողը պարտավոր է իրականացնել ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրություն:»

**Հոդված 3**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ից: